ՀՀ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀ ՆԳՆ ՀՄԱԱՊՁԲ-2025/Ա-90

ք.Երևան «27» 05 2025թ.

ՀՀ Ներքին գործերի նախարարությունը ի դեմս ՀՀ Ներքին գործերի նախարարության գլխավոր քարտուղար Ա. Ֆիդանյանի, որը գործում է ՀՀ ՆԳՆ կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «ԱՐՄՏՈՐԳ» ՓԲԸ-ը, ի դեմս գլխավոր տնօրեն Կ. Պողոսյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 23.04.2025 թվականի 464-Ն որոշումը և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետը՝ «Սիրիայի բնակչությանը մարդասիրական օգնություն ցուցաբերելու նպատակով» կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են **15 օրից** ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են **15 օրից** ավելի,

2.1.8 Ընդունել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.4 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.6 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.8 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.10 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է **17 528 892.10** (տասնյոթ միլիոն հինգ հարյուր քսանութ հազար ութ հարյուր իննսուն երկու դրամ տաս լումա) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման

ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում գնորդը վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **5 աշխատանքային** օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև. ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց.

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.10 Վաճառողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում գնորդը վճարումներն իրականացնելիս ապահովի վաճառողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում գնորդը պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է գնորդի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը

8.11 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.12 Պայմանագիրը կազմված է 17 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3,N 3.1 և N 4 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.13 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ ներքին գործերի նախարարություն	«ԱՐՄՏՈՐԳ» ՓԲԸ
ք. Երևան, Նալբանդյան 130	**Իրավաբան.հասցե՝ Ք.Երևան,Տերյան 69**
ՀՀ Ֆինանսների նախարարության	**Գործ.հասցե Ք.Երևան,Շիրակի 90/2**
գործառնական վարչություն	**Բանկ՝ Արդշինբանկ ՓԲԸ**
ՀՎՀՀ 90001042471	**Հ/Հ 2470103659940000**
ՀԿՀՀ 02882913	**ՀՎՀՀ 02645499**
Հեռ. 010 59-61-52	**Հեռ: 077 886 788**
Էլ. հասցեն՝ gnumner@mia.gov.am	**Էլ. Փոստ: ahovsepyan@artfood.am**
Ա. Ֆիդանյան	**Կ.Պողոսյան**
/ՀՀ ԵԳՆ Գլխավոր քարտուղար/	**/Գլխավոր Տնօրեն**
(ստորագրություն)	**(ստորագրություն)**
Կ.Տ	**Կ.Տ)**

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված N i
«27» 05 2025թ. կնքված
ՀՀ ՆԳՆ ՀՄԱՊՁԲ-2025/Ա-90 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի										
...ով ...սված ...ժնի ...ը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման		
								հասցեն	ենթակա քանակը	ժամկետը***
	15332291/1	Ծիրանի մուրաբա 880գ տարրայով	Ըստ հավելված 1.1-ի	հատ	1222.2	2 581 286.4	2112	ՀՀ, ք. Արարատյան 43	2112	Գնորդի կողմից նշված ժամկետում
	15331178/7	պահածոյացված բանջարեղեն-Այվար տնական 350գ տարրայով	Ըստ հավելված 1.2-ի	հատ	649.9	1 434 979.20	2208	ՀՀ, ք. Արարատյան 43	2208	Գնորդի կողմից նշված ժամկետում
	15331178/5	պահածոյացված բանջարեղեն-Աջափսանդալ բանջարեղենային ռագու 460գր. Տարրայով	Ըստ հավելված 1.3-ի	հատ	591.7	1 363 276.80	2304	ՀՀ, ք. Արարատյան 43	2304	Գնորդի կողմից նշված ժամկետում
	15331178/4	պահածոյացված բանջարեղեն-Մանղալ-աղցան 500գ	Ըստ հավելված 1.4-ի	հատ	640.2	1 505 750.40	2352	ՀՀ, ք. Արարատյան 43	2352	Գնորդի կողմից նշված ժամկետում
	15331178/3	պահածոյացված բանջարեղեն-լոլիկ կեղևահանված սեփական հյութով 670 գ.	Ըստ հավելված 1.5-ի	հատ	582	1 229 184	2112	ՀՀ, ք. Արարատյան 43	2112	Գնորդի կողմից նշված ժամկետում

		Տարրայով								
	15331178/2	պահածոյացված բանջարեղեն-Իման բայալդի 450գ. Տարրայով	Ըստ հավելված 1.6-ի	հատ	756.6	1 597 939.20	2112	ՀՀ, ք. Արարատյան 43	2112	Գնորդի կողմից նշված ժամկետում
	15331178/1	պահածոյացված բանջարեղեն-Բադրիջանի խավիար տնական 470գ. Տարրայով	Ըստ հավելված 1.7-ի	հատ	727.5	1 676 160	2304	ՀՀ, ք. Արարատյան 43	2304	Գնորդի կողմից նշված ժամկետում
	15333100/2	Տոմատի մածուկ 580 գ տարրայով	Ըստ հավելված 1.8-ի	հատ	708.1	1 495 507.20	2112	ՀՀ, ք. Արարատյան 43	2112	Գնորդի կողմից նշված ժամկետում
	15333100/1	Տոմատի մածուկ 750 գ տարրայով	Ըստ հավելված 1.9-ի	հատ	892.4	2 056 089.60	2304	ՀՀ, ք. Արարատյան 43	2304	Գնորդի կողմից նշված ժամկետում
	15131631/1	Մսի պահածո-շոգեխաշած տավարի միս 550 գր. Տարրայով	Ըստ հավելված 1.10-ի	հատ	1348.3	2 588 736	1920	ՀՀ, ք. Գյումրի	1920	Գնորդի կողմից նշված ժամկետում

Հավելված 1.1

2112 հատ ապակյա բանկայով **ծիրանի մուրաբա, որը համարժեք է 1858.56 կգ ծիրանի մուրաբայի:**
Փաթեթավորում: 350 մլ ապակյա բանկա
Նետտո քաշ: 450 գ
Զտաքաշ: 230գ
Բաղադրություն: ծիրան 51%, ջուր 4.75%, շաքարավազ 44.05%, կիտրոնաթթու-թթվայնության կարգավորիչ 0.1%, վանիլին 0.1%.
Պարունակությունը 100գ մթերքում (միջին ցուցանիշ):
ածխաջրեր- 62 գ
Էներգետիկ արժեքը - 248 կկալ/ 1037կՋ
Բնութագրեր:
Համ և հոտ: Արտահայտված, բնորոշ այս տեսակի հումքին: Համը քաղցր է կամ քաղցրաթթու, առանց որևէ կողմնակի համի և հոտի:.
Գույն: Այս տեսակի պտղին համապատասխան:
Արտաքին տեսք: Եփած ամբողջական մրգեր, միատեսակ հասունության աստիճանով, հավասարաչափ բաշխված թանձր շաքարի օշարակի մեջ:
Ֆիզիկաքիմիական ցուցանիշներ:
Չոր նյութերի պարունակությունը, %, ոչ պակաս 60%
Մանրէաբանական ցուցանիշներ: Մանրէազերծված է:
Օգտագործման հրահանգ: Պատրաստ է օգտագործման:
Պահման ժամկետը: 2 տարի +5°C-ից +20°C և 75%-ից ոչ ավել օդի հարաբերական խոնավության պայմաններում:
Պահման պայմանները: Բացելուց հետո պահել սառնարանում 72 ժամից ոչ ավել 0°C -ից + 5°C պայմաններում:

Հավելված 1.2

2208 հատ ապակյա բանկայով **այվար տնական, որը համարժեք է 772.8 կգ այվար տնական-ի:**
Փաթեթավորում: 350 մլ ապակյա բանկա.
Նետտո քաշ: 360 գ
Բաղադրություն: կարմիր բուլղարական պղպեղ 50%, բադրիջան 36,15 %, տոմատի մածուկ 8%, սխտոր 0,35%, բուսական յուղ 2.5%, աղ 1.5%, շաքարավազ 1.4%, սև պղպեղ աղացած 0.1%.
Պարունակությունը 100գ մթերքում (միջին ցուցանիշ):
Սպիտակուցներ -1գ, ճարպեր-4.5գ, ածխաջրեր- 5գ
Էներգետիկ արժեքը - 65 կկալ/272կՋ
Բնութագրեր:
Համ և հոտ: խորոված սմբուկին և կարմիր պղպեղին բնորոշ համով և հոտով: Առանց կողմնակի համի և հոտի:
Արտաքին տեսքը և գույնը: կարմիր պղպեղի և սմբուկի համասեռ զանգված, կանաչեղենի և համեմունքների առկայություն: Գույնը նարնջագույն կարմիր:
Ֆիզիկաքիմիական ցուցանիշներ:
Յուղի զանգվածային մասը, %, 2.0-8.0
Կերակրի աղի զանգվածային մասը, %, 1.2-2.0
Մանրէաբանական ցուցանիշներ: Մանրէազերծված է:
Օգտագործման հրահանգ: Պատրաստ է օգտագործման:
Պահման ժամկետը: 2 տարի +5°C-ից +20°C և 75%-ից ոչ ավել օդի հարաբերական խոնավության պայմաններում:
Պահման պայմանները: Բացելուց հետո պահել սառնարանում 72 ժամից ոչ ավել 0°C -ից + 5°C պայմաններում:

Հավելված 1.3

2304 հատ ապակյա բանկայով **ԱՋԱՓՍԱՆԴԱԼ բանջարեղենային ռագու, որը համարծեք է 1059.80 կգ ԱՋԱՓՍԱՆԴԱԼ բանջարեղենային ռագու-ի:**
Փաթեթավորում: 450 մլ ապակյա բանկա
Նետտո քաշ: 460 գ
Բաղադրություն: բադրիջան 20%, լոլիկ 49.2%, տոմատի մածուկ 15%, կանաչ պղպեղ բուլղարական 12%, կանաչ լոբի 0.2%, բամիա 0.2%, մաղադանոս 0.2%, համեմ աղացած 0.2%, շաքարավազ 1.5%, աղ 1.5%:

Հավելված 1.4

2352 հատ ապակյա բանկայով **Մանղալ-աղցան , որը համարժեք է 1176,0 կգ Մանղալ-աղցան -ի:**

Փաթեթավորում: 630 մլ ապակյա բանկա

Նետտո քաշ: 500 գ

Բաղադրություն: Բադրիջան, մանրացված լոլիկ, սոխ, բուլղարական

Պարունակությունը 100գ մթերքում (միջին ցուցանիշ): Սպիտակուցներ -1.5գ, ածխաջրեր- 5գ Էներգետիկ արժեքը - 26 կկալ/109կՋ **Բնութագրեր:** **Համ և հոտ:** Եփած սմբուկի, պղպեղի և լոլիկի, օգտագործված կանաչեղենի և համեմունքներին բնորոշ համով: Չափավոր աղի: **Արտաքին տեսքը և գույնը:** Սմբուկի, պղպեղի և լոլիկի թանձր զանգված, կանաչեղենի առկայություն: Գույնը կարմրադարչնագույն: **Ֆիզիկաքիմիական ցուցանիշներ:** Լուծվող չոր նյութերի զանգվածային մասը, %, 8.0-12.0 Կերակրի աղի զանգվածային մասը, %, 0.8-1.7 **Մանրէաբանական ցուցանիշներ:** Մանրէազերծված է: **Օգտագործման հրահանգ:** Պատրաստ է օգտագործման: **Պահման ժամկետը:** 2 տարի +5°C-ից +20°C և 75%-ից ոչ ավել օդի հարաբերական խոնավության պայմաններում: **Պահման պայմանները:** Բացելուց հետո պահել սառնարանում 72 ժամից ոչ ավել 0°C -ից + 5°C պայմաններում:	պղպեղ, տոմատի մածուկ, բուսական յուղ, աղ, մաղադանոս, սամիթ, ծիտրոն, **Պարունակությունը 100գ մթերքում (միջին ցուցանիշ):** Սպիտակուցներ -3գ, ճարպեր-2,5գ, ածխաջրեր- 6,5գ Էներգետիկ արժեքը - 61 կկալ/490կՋ **Բնութագրեր:** **Արտաքին տեսքը և գույնը:** Բուսական յուղի մեջ տապակած բանջարեղենի խիտ զանգված, մանր կտրատած սոխ և թարմ կանաչեղեն, համեմունքներ՝ տոմատի մածուկի մեջ: **Մանրէաբանական ցուցանիշներ:** Մանրէազերծված է: **Օգտագործման հրահանգ:** Պատրաստ է օգտագործման: **Պահման ժամկետը:** 2 տարի +5 °C-ից +25 °C և 75%-ից ոչ ավել օդի հարաբերական խոնավության պայմաններում:
Հավելված 1.5	**Հավելված 1.6**
2112 հատ ապակյա բանկայով **կեղեվահանված լոլիկը սեփական հյութի մեջ, որը համարժեք է 1415 կգ կեղեվահանված լոլիկը սեփական հյութի մեջ-ի:** **Փաթեթավորում:** 720 մլ ապակյա բանկա. **Նետտո քաշ:** 670 գ **Զտաքաշ:** 430գ **Բաղադրություն:** լոլիկ կեղևահանված 64%, տոմատի հյութ 35%, աղ 1%: **Պարունակությունը 100գ մթերքում (միջին ցուցանիշ):** ածխաջրեր- 5գ Էներգետիկ արժեքը - 20 կկալ/84կՋ **Բնութագրեր:** **Համ և հոտ:** Եփած լոլիկին բնորոշ համով և հոտով: Առանց կողմնակի համի և հոտի:. **Արտաքին տեսքը և գույնը:** միջին չափի կարմիր լոլիկներ, կեղևահանված: Գույնը՝ կարմիր:	**2112 հատ** ապակյա բանկայով **իմամ բայալդի, որը համարժեք է 950,4 կգ իմամ բայալդի-ի:** **Փաթեթավորում:** 450 մլ ապակյա բանկա **Նետտո քաշ:** 450 գ **Բաղադրություն:** բադրիջան 45.6%, բուսական յուղ 15%, լոլիկ 20%, սոխ 7%, տոմատի մածուկ 10%, սխտոր 0.3%, աղ 1.4%, շաքարավազ 0.3%, մաղադանոս 0.2%, սև պղպեղ0.1%, հոտավետ պղպեղ աղացած 0.1%. **Պարունակությունը 100գ մթերքում (միջին ցուցանիշ):** Սպիտակուցներ -1.5գ, ճարպեր-5գ, ածխաջրեր- 9գ Էներգետիկ արժեքը - 87 կկալ/364կՋ **Բնութագրեր:** **Համ և հոտ:** տապակած սմբուկին, տոմատին, օգտագործված կանաչեղենի և համեմունքերին բնորոշ համով, չափավոր աղի: **Արտաքին տեսքը, գույնը:** Սմբուկը բուսական յուղի և տոմատի մեջ տապակած, օգտագործված կանաչիների առկայություն: Գույնը

Ֆիզիկաքիմիական ցուցանիշներ: Կերակրի աղի զանգվածային մասը, %, 0.7-1.6 **Մանրէաբանական ցուցանիշներ:** Մանրէազերծված է: **Օգտագործման հրահանգ:** Պատրաստ է օգտագործման: **Պահման ժամկետը:** 2 տարի +5°C-ից +20°C և 75%-ից ոչ ավել օդի հարաբերական խոնավության պայմաններում: **Պահման պայմանները:** Բացելուց հետո պահել սառնարանում 72 ժամից ոչ ավել 0°C -ից + 5°C պայմաններում:	կարմրադարչնագույն **Ֆիզիկաքիմիական ցուցանիշներ:** Յուղի զանգվածային մասը, %, ոչ պակաս 5 Կերակրի աղի զանգվածային մասը, %, 0.8-2.0 **Մանրէաբանական ցուցանիշներ:** Մանրէազերծված է: **Օգտագործման հրահանգ:** Պատրաստ է օգտագործման: **Պահման ժամկետը:** 2 տարի +5°C-ից +20°C և 75%-ից ոչ ավել օդի հարաբերական խոնավության պայմաններում: **Պահման պայմանները:** Բացելուց հետո պահել սառնարանում 72 ժամից ոչ ավել 0°C -ից + 5°C պայմաններում
Հավելված 1.7	**Հավելված 1.8**
2304 հատ ապակյա բանկայով **բադրիջանի խավիար, որը համարժեք է 1082.88 կգ բադրիջանի խավիար-ի:** **Փաթեթավորում:** 450 մլ ապակյա բանկա **Նետտո քաշ:** 470 գ **Բաղադրություն:** բադրիջան 61.8%, գազար 12%, բուսական յուղ 8%, սոխ 8%, տոմատի մածուկ 8%, աղ 1.5%, շաքարավազ 0.3%, մաղադանոս 0.2%, սև պղպեղ 0.1%, հոտավետ պղպեղ 0.1%. **Պարունակությունը 100գ մթերքում (միջին ցուցանիշ):** Սպիտակուցներ -1գ, ճարպեր-7գ, ածխաջրեր- 7գ Էներգետիկ արժեքը - 97 կկալ/405կՋ **Բնութագրեր:** **Համ և հոտ:** Սմբուկի խավիարին բնորոշ համով և հոտով: Առանց կողմնակի համի և հոտի:. **Արտաքին տեսքը և գույնը:** Համասեռ, դարչնակարմրավուն, հավասար մանրացված բանջարեղենով, կանաչու և համեմունքների առկայությամբ: **Ֆիզիկաքիմիական ցուցանիշներ:** Յուղի զանգվածային մասը, %, ոչ պակաս 5 Կերակրի աղի զանգվածային մասը, %, 0.8-1.6 **Մանրէաբանական ցուցանիշներ:** Մանրէազերծված է: **Օգտագործման հրահանգ:** Պատրաստ է օգտագործման: **Պահման ժամկետը:** 2 տարի +5°C-ից +20°C և 75%-ից ոչ ավել օդի հարաբերական խոնավության պայմաններում: **Պահման պայմանները:** Բացելուց հետո պահել սառնարանում 72 ժամից ոչ ավել 0°C -ից + 5°C պայմաններում:	2112 հատ տարրայով տոմատի մածուկ, որը համարժեք է 1224.96 կգ տոմատի մածուկի: Բաղադրությունը՝ լոլիկ: Սննդային արժեքը 100գ. Պատրաստի արտադրանքում՝ Ածխաջրեր 15.8գ., Էներգետիկ արծեքը 63.2 կկալ/266.7ԿՋ/: Մանրէազերծված է: Պահման ժամկետը՝0° C մինչև 25°C; Պիտանելիության ժամկետը 3 տարի: ՀՀ ՏՊ 05727215.0378-2016
Հավելված 1.9	**Հավելված 1.10**

2304 հատ տարրայով տոմատի մածուկ, որը համարժեք է 1728,0 կգ տոմատի մածուկի: Բաղադրությունը՝ լոլիկ: Սննդային արժեքը 100գ. Պատրաստի արտադրանքում՝ Ածխաջրեր 15.8գ., Էներգետիկ արծեքը 63.2 կկալ/266.7ԿՋ/: Մանրէազերծված է: Պահման ժամկետը՝0° C մինչև 25°C; Պիտանելիության ժամկետը 3 տարի: ՀՀ ՏՊ 05727215.0378-2016	1920 հատ Թիթեղյա տարրայով շոգեխաշած տավարի միս, որը համարժեք է 1 056.0կգ շոգեխաշած տավարի մսի: Բարձր կարգ, Մանրէազերծված. Մսային պահածո. Շոգեխաշած տավարի միս կտորով: Բաղադրությունը՝ տավարի միս, տավարի ճարպ, սոխ, համեմունքներ, կերակրի աղ, դափնու տերև: Մսի և ճարպի զանգվածային մասը ոչ պակաս 71% Սննդայինարժեքը 100գ՝ սպիտակուցներ 15գ, ճարպեր 17գ, էներգետիկ արժեքը՝ 213 կկալ / 891 կՋ: Պիտանիության ժամկետը 0°C մինչև 20°C և 75% ոչ ավելի օդի հարաբերական խոնավության պայմաններում 3 տարի: Տարան բացելուց հետո պահել սառնարանում 24 ժամ: Օգտագործելուց առաջ խորհուրդ է տրվում տաքացնել: Զտաքաշը՝ 550գ ԳOUS / ГОСТ 32125-2013

Գ Ն Ո Ր Դ

ՀՀ ներքին գործերի նախարարություն
ք. Երևան, Նալբանդյան 130
ՀՀ Ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ 900011042471
ՀՎՀՀ 02882913
Հեռ. 010 59-61-52
Էլ. հասցեն՝ gnumner@mia.gov.am

Ա. Ֆիդանյան
/ՀՀ ՆԳՆ Գլխավոր քարտուղար/
(ստորագրություն)
Կ.Տ

Վ Ա Ճ Ա Ռ Ո Ղ

«ԱՐՄՏՈՐԳ» ՓԲԸ
Իրավաբան.հասցե՝ Ք,Երևան,Տերյան 69
Գործ.հասցե Ք.Երևան,Շիրակի 90/2
Բանկ՝ Արդշինբանկ ՓԲԸ
Հ/Հ 2470103659940000
ՀՎՀՀ 02645499
Հեռ: 077 886 788
Էլ. Փոստ: ahovsepyan@artfood.am

Կ.Պողոսյան
Գլխավոր Տնօրեն
(ստորագրություն)
Կ.Տ)

Հավելված N 2
«27» 05 2025 թ. կնքված
ՀՀ ՆԳՆ ՀՄԱՊՁԲ-2025/Ա-90 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի														
դրավերով նախատեսված փաթաթաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2025թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	15332291/1	Ծիրանի ջեմ					2 581 286.4	2 581 286.4	2 581 286.4	2 581 286.4	2 581 286.4	2 581 286.4	2 581 286.4	2 581 286.4	**2 581 286.4**
2	15331178/7	Պահածոյացված բանջարեղեն					1 434 979.20	1 434 979.20	1 434 979.20	1 434 979.20	1 434 979.20	1 434 979.20	1 434 979.20	1 434 979.20	**1 434 979.20**
3	15331178/5	Պահածոյացված բանջարեղեն					1 363 276.80	1 363 276.80	1 363 276.80	1 363 276.80	1 363 276.80	1 363 276.80	1 363 276.80	1 363 276.80	**1 363 276.80**

| | | |

10	15131631/1	Մսի պահածո					2 588 736	2 588 736	2 588 736	2 588 736	2 588 736	2 588 736	2 588 736	2 588 736	2 588 736

Գ Ն Ո Ր Դ

ՀՀ ներքին գործերի նախարարություն
ք. Երևան, Նալբանդյան 130
ՀՀ Ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ 900011042471
ՀՎՀՀ 02882913
Հեռ. 010 59-61-52
Էլ. հասցեն՝ gnumner@mia.gov.am

Ա. Ֆիդանյան
/ՀՀ ՆԳՆ Գլխավոր քարտուղար/
(ստորագրություն)
Կ.Տ

Վ Ա Ճ Ա Ռ Ո Ղ

«ԱՐՄՏՈՐԳ» ՓԲԸ
Իրավաբան.հասցե՝ Ք,Երևան,Տերյան 69
Գործ.հասցե Ք.Երևան,Շիրակի 90/2
Բանկ՝ Արդշինբանկ ՓԲԸ
Հ/Հ 2470103659940000
ՀՎՀՀ 02645499
Հեռ: 077 886 788
Էլ. Փոստ: ahovsepyan@artfood.am

Կ.Պողոսյան
/Գլխավոր Տնօրեն
(ստորագրություն)
Կ.Տ)

Հավելված N 3
« » 2025 թ. կնքված
ՀՀ ՆԳՆ ՀՄԱՊՁԲ-2025/Ա-90 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

« » 2025թ. կնքված
ՀՀ ՆԳՆ ՀՄԱՊՁԲ-2025/Ա-90 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Հավելված N 4
« » 2025 թ. կնքված
ՀՀ ՆԳՆ ՀՄԱՊՁԲ-2025/Ա-90 ծածկագրով պայմանագրի

ԾԱՆՈՒՑՈՒՄ

_____ հայտնում է, որ .
ֆինանսական գործակալի անվանումը

1. _____-ի և _____-ի միջև «--» 20 թ. կնքված
գնորդի անվանումը վաճառողի անվանումը

«--------/---------» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակում իր և

_____-ի միջև «--» 20 թ-ին կնքվել է «----------» ծածկագրով ֆակտորինգի
վաճառողի անվանումը

պայմանագիրը,

2. համաձայն է Պայմանագրի 8.12 կետով սահմանված պահանջներին:

_____ _____
ֆինանսական գործակալի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը) ստորագրությունը

Կ. S. (առկայության դեպքում)

«--» 20 թ.